



«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 90 05 26
E-mail: info@hetq.am, khachatrian.tatev@gamil.com, URL : www.hetq.am

09. 02.2015

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանին

Հարգելի պարոն Ղահրամանյան

2014թ. հոկտեմբերի 16-ին «Հետք»-ը հարցում էր ուղարկել 40 տարուց ավել չվերանորոգված Էջմիածնի հիվանդանոցի բարեկարգման վերաբերյալ: Ձեր պատասխանում Դուք նշել էիք, որ հարցը *«քննարկվում է Արմավիրի մարզի բարեկամ-գործընկեր Չեխիայի Հանրապետության Մորավսկի-Միլեգյան երկրամասի առողջապահական հաստատությունների ղեկավարների հետ և ակնկալվում է, որ այն առաջիկայում լուծում կստանա»:*

Դեռևս հոկտեմբեր ամսվա վերջին Մորավսկի-Միլեգյան երկրամասի առողջապահական հաստատությունների ղեկավարները պետք է ժամանեին հիվանդանոց: Խնդրում ենք տեղեկացնել.

1. Ի՞նչ փուլում է գտնվում այդ քննարկման գործընթացը, և եթե ավարտվել է, ի՞նչ է որոշվել:
2. 2015թ. առողջապահական ծրագրերի համար ինչքա՞ն գումար է հատկացվել Արմավիրի մարզպետարանին: Որքա՞ն գումար է անհրաժեշտ հիվանդանոցի վերանորոգման համար:
3. Ինչպե՞ս էք գնահատում հիվանդանոցի ներկայիս վիճակը:
4. Ի՞նչ չափանիշներով էք առաջնորդվում՝ հիվանդանոցի վերանորոգումն այս կամ այն ծրագրում ընդգրկելու համար:

Կանխավ շնորհակալություն,
«Հետաքննող լրագրողներ» հ/կ-ի,
«Հետք» թերթի լրագրող

Տաթև Խաչատրյան